

Հարգանքով հիշում ենք ցեղասպանության զոհերին նրանց սպանության 106-րդ տարում

1894-1924 թթ. Օսմանյան ղեկավարության ներքո և հետագայում Թուրքիայի Հանրապետության կողմից «ժողովուրդների հարցը» «լուծվեց» ամենադաժան և ամենաարմատական եղանակով՝ ցեղասպանության միջոցով: Հետևանքը եղավ հասարակական և ժողովրդագրական կառուցվածքի հիմնարար փոփոխությունը: Ցեղասպանությունը, որն ուղղված էր գլխավորապես հայ ժողովրդի դեմ և իրականացվում էր Առաջին համաշխարհային պատերազմի ստվերում՝ ծագած առիթներով, մի քանի տարում հանգեցրել է քրիստոնյա ամբողջական ժողովուրդների լիակատար ոչնչացմանը՝ որպես Օսմանյան կայսրության հպատակների:

Այդ պահից սկսած՝ ոչինչ այլևս այնպես չէր, ինչպես կար: Քրիստոնյա ժողովուրդների զանգվածային սպանությունը, որոնք մշտապես դիտվում էին որպես լուսավոր ապագայի դեսպաններ և որպես փոփոխությունների հասարակական շարժիչ, Թուրքիայի հասարակությանը միշտ է խավարի հորձանուտը:

1915 թ. ցեղասպանությունը նոր ժամանակաշրջանի անպատիժ մնացած ամենամեծ ցեղասպանությունն է: Դրա պատասխանատուները, դեռ մինչ մահացածների արյունը կշորանար, սկսել են ժխտել իրենց մեղքը: Այս ցեղասպանության շարունակական ժխտումը և փաստը, որ ժխտողականությունն ինքնին դարձել է իշխանության գործիք, հիմնովին տարբերակում է այս ցեղասպանությունը մյուսներից:

Այս իրողության գիտությամբ և խոր տխրությամբ ու ամոթով՝ մենք հիշելու ենք ցեղասպանության զոհերին: Ցեղասպանության 106-րդ տարելիցին մենք շարունակելու ենք հասարակական խղճին առաջադրել անվերջ հետապնդումը, զանգվածային սպանությունները և մարդկության դեմ կուտակված հանցագործությունները:

Մենք չենք մոռանա հոգիները, որոնք սպանվեցին անմարդկային ամբիցիաների և նպատակների պատճառով (թուրքական «ռասայի» և սուննի իսլամի վրա հիմնված միատարր հասարակության կառուցում), միայն որովհետև նրանք ունեին այլ ազգային ինքնություն կամ այլ կրոնական համոզմունք և պաշտպանում էին ավելի առաջադեմ քաղաքակրթությանը:

Մենք չենք մոռանա ցեղասպանության զոհերին, քանի դեռ հայ ժողովրդի վիշտը, որը կրում է ցեղասպանության արյունահոսող վերքը, հանդարտված չէ, քանի դեռ նրանց հետ նույն ճակատագիրը կհսող՝ ասորա-արամեական, եզդի, հույն և պոնտացի հույն ժողովուրդների տառապանքներն ու վիշտը հանդարտված չեն:

Մենք չենք մոռանա ցեղասպանության աքսորյալներին, որոնք կորցրել են իրենց ամբողջ ունեցվածքը, որանց գոյության միջոցները ոչնչացվեցին և որանց հայրենիքը կողոպտվեց, և որոնք նույն հատիկների պես ցրվեցին աշխարհով մեկ՝ միայն իրենց կյանքը փրկելու համար, և որոնք, չնայած աքսորի շղթաներին, սերնդից սերունդ ձգտում են դեպի հայրենիք:

Մենք չենք մոռանա ցեղասպանության զոհերին, որպեսզի Դերսիմի երեխաներն ու «կորած աղջիկները», որոնք մեծացան ցեղասպանության ողբերգերով և խլվեցին իրենց մայրերից, այնպես, ինչպես սիրտն է պոկվում կրծքավանդակից, կարողանան գտնել իրենց հոգու փրկությունը:

Մենք չենք մոռանա ցեղասպանության զոհերին, մինչև 1915 թ. ցեղասպանության խավարը չճեղքվի արդարության լույսով, մինչև հանցագործները ափսոսանքով ներողություն չխնդրեն զոհերից, մինչև արդարությունը չհաղթի:

Մենք չենք մոռանա ցեղասպանության զոհերին, քանի դեռ քուրդ ժողովրդի, որը մշտապես դողում է հետևյալ զգացողությունից՝ «Իմ հերթն է», սարսափելի վիշտը չի ավարտվել և ցեղասպանության նոր աղետի դռները փակված չեն:

Մենք չենք մոռանա ցեղասպանության զոհերին, քանի դեռ ջարդարար խմբավորումների կողմից, որոնք կույր գնդակի պես հենվում են ալևի հավատքի մարդկանց՝ կարմիր խաչերով տարբերանշված դռներին, մարդկության դեմ կրկնվող հանցագործություններին վերջ չի եկել:

Մենք չենք մոռանա ցեղասպանության զոհերին՝ նվաճող ազահ բռնակալության անսահման ավարառու հարձակումներին ենթարկված մեր հարևանների քաղաքացիական իրավունքների խախտումներին վերջ դնելու համար:

Մտի և զրպարտության, մերժման և ատելության դեմ՝ **մեր երեխաներին մենք կասենք ճշմարտությունը:** Մենք չենք մոռանա ցեղասպանության զոհերին և մեր պատասխանատվությունը՝ ի սեր արդարության, որպեսզի մեր ապագա սերունդները կարողանան լիարժեք ապրել միասին, որպեսզի առանց պատերազմի և մարդու արժանապատվությանը համապատասխանող ապագայում նրանք կարողանան վայելել իրավունքներն ու ազատությունները, որոնց մենք ենք ձգտել:

Հարգանք ցեղասպանության զոհերի հիշատակին և ոգեկոչմանը, նրանց թողած երեխաների և թոռների կյանքի իրավունքի նկատմամբ: ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ Ժողովուրդների համար, որոնք ցեղասպանության զոհ են: ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ ԻՆ և կրկին ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ ԻՆ:

Մայնի Ֆրանկֆուրտի «Ցեղասպանության հակառակորդների միություն»

Soykırım Karşıtları Derneği (SKD), կոնսակտ՝ Ali Ertem, E-Mail: skd@gmx.net